

Փետրվարի Ժ եւ քիւրէքճին եւ ժողովեալ զաւուրս Լ: Պատրաստեցին նաւս Լ եւ առաքեցին ի Մարտի Ժ ի Ծովն Սեաւ ի վերայ Ուռուսաց, զի իմացան թէ ի ծով ելեալ է նաւովք: Յորժամ եւ քիւրէքճին, կայր ի վերայ Ուսկիւտարոյ Գ քիւրէկ, եւ բնակիչք գնացեալ անկան առ Մահմուտ աղայ ոմն աներորդոյ վէզիրի եւ առ եղբայր զայմախամին, որ էր եւ քէհեա նորին, եւ լինէին սոքա յՈւսկիւտարն, վասն որոյ եւ խարճեցին դրամ նոցա, եւ նոքա հրամայեցին չտալ նոցա զայն թէ Մէնզիլի ըստակ կուտան նոքա, զոր սահմանեալ էր Քեօփրուլուն: Եւ վարդապետն Ե անգամ գրով ձայնեալ զերիցունս եւ զմեծամեծս եկեղեցեաց. երբեմն գալին եւ երբեմն պատճառէին ինչ, անմիաբան լեալ անհոգացան թէ ինքն հոգասցէ, եւ ոչ գնացին միաբան՝ թէ մի՛ լիցի ալս: Եւ տեսեալ վարդապետին թէ նոքա ոչ արարին, եմուտ ընծայիւք առ քէհեան, եւ ոչ կամեցաւ. այլ թէ զերեք քիւրէկն Զ եկեղեցի տացեն: Եւ վերակացուք Ուսկիւտարցոց կալեալ զարս ոմանս ի Սուրբ Սարգսոց թէ Եամաղ ձեր էաք՝ դուք տաջիք, եւ հօճէթ արարին: Եւ նոքա անկարանային ի նոյն, եւ եկեղեցիքն եւս ոչ տալին թէ Մեք զմերն ունիմք եւ թէ՛ Զեզ վերայ արարին հօճէթ. եւ լինէր աղմուկ: Վասն որոյ եւ գրեաց առ եկեղեցիսն թէ Ո՛վ ոք որ հնազանդ է հրամանաց իմոց, տաջիք զայն եւ յալլում ժամու տեսչուք վասն նոցա:

Ընդ աւուրսն ընդ աշնոսիկ լու եղեւ ի քաղաքս վասն թէրսխանէ քէհեասուն որ կայր ընդ տօնանմային ի Ծովն Սպիտակ զօրագլուխ նաւուք զօրուն պատերազմի. ի պատճառս ինչ առաքէ վէզիրն զափուճիպաչի կոչել զնա առ ինքն յէտրէնէ. իսկոյն իմացեալ նորա թէ վասն սպանման ձայնէ զնա առ իւր,